

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի հունիսի 11-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ՕՐԵՆՔԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ և ՆՊԱՏԱԿԸ

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության գիտության, կրթության, մշակույթի, գրականության, լրագրության, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, տնտեսության բնագավառների ականավոր գործիչներին, կոլեկտիվներին պատվավոր կոչումներ շնորհելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է պատվավոր կոչումներ շնորհելու կարգն ու պայմանները:

Հոդված 2. ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատվավոր կոչումների մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից:

Հոդված 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԸ

Գիտության, կրթության, մշակույթի, գրականության, լրագրության, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, տնտեսության բնագավառների զարգացման գործում ունեցած ակնառու հաջողությունների և բացառիկ վաստակի համար սահմանվում են Հայաստանի Հանրապետության հետևյալ պատվավոր կոչումները (այսուհետ՝ պատվավոր կոչումներ).

- ա) Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ.
- բ) Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ.
- գ) Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ.
- դ) Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ.
- ե) Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ.
- զ) Հայաստանի Հանրապետության վաստակավոր նկարիչ.
- է) Հայաստանի Հանրապետության արվեստի վաստակավոր գործիչ.
- ը) Հայաստանի Հանրապետության մշակույթի վաստակավոր գործիչ.
- թ) Հայաստանի Հանրապետության վաստակավոր ճարտարապետ.
- ժ) Հայաստանի Հանրապետության վաստակավոր լրագրող.
- ժա) Հայաստանի Հանրապետության վաստակավոր բժիշկ.
- ժբ) Հայաստանի Հանրապետության տնտեսության վաստակավոր աշխատող.
- ժգ) Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբան.
- ժդ) Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ, վաստակավոր մարզիչ, ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատող.

Ժե) Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվ:
(3-րդ հոդվածը լրաց. 10.04.08 ՀՕ-31-Ն)

Հոդված 4. ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾՉԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում է շնորհվում գիտնականներին, գիտական աշխատողներին՝ արժեքավոր գիտական աշխատությունների, հատկապես կարևոր գիտական հայտնագործությունների և գյուտերի, գիտության և կրթության բնագավառների զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար:

Հոդված 5. ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում է շնորհվում նախադպրոցական, արտադպրոցական, հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ուսումնական և ուսումնադաստիարակչական հաստատություններում առնվազն 15 տարի աշխատած ուսուցիչներին, մանկավարժներին, դասախոսներին և աշխատակիցներին՝ մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում ձեռք բերած ակնառու հաջողությունների և բացառիկ ավանդի համար:

Հոդված 6. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Ժողովրդական արտիստի պատվավոր կոչում է շնորհվում թատրոնի, կինոյի, կրկեսի արտիստներին, ռեժիսորներին, կոմպոզիտորներին, դիրիժորներին, բալետմայստերներին, երաժշտական, խմբերգային, պարային և այլ կոլեկտիվների գեղարվեստական ղեկավարներին, երաժիշտ-կատարողներին՝ բարձր վարպետության, աչքի ընկնող բեմական կերպարներ, երաժշտական ստեղծագործություններ, ռադիոբեմադրություններ, կինոֆիլմեր ստեղծելու և արվեստի զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար:

Հոդված 7. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐՉԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Ժողովրդական նկարչի պատվավոր կոչում է շնորհվում կերպարվեստի ականավոր գործիչներին՝ գեղանկարչության, քանդակագործության, գծանկարչության, դիզայնի, թատերադեկորացիոն, դեկորատիվ-կիրառական արվեստի զարգացման, ինչպես նաև բարձրարժեք գեղարվեստական գործեր ստեղծելու, համընդհանուր ճանաչում ունենալու և բացառիկ վաստակի համար:

Հոդված 8. ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՐՏԻՍՏԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Վաստակավոր արտիստի պատվավոր կոչում է շնորհվում թատրոնի, երաժշտության, կինոյի, կրկեսի արտիստներին, ռեժիսորներին, կոմպոզիտորներին, դիրիժորներին, կոնցերտմայստերներին, բալետմայստերներին, երաժշտական, խմբերգային, պարային և այլ կոլեկտիվների գեղարվեստական ղեկավարներին, ստեղծագործող մյուս աշխատողներին, երաժիշտ-կատարողներին՝ բարձր վարպետության և արվեստի զարգացմանը նպաստելու համար:

Հոդված 9. ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՆԿԱՐՋԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Վաստակավոր նկարչի պատվավոր կոչում է շնորհվում կերպարվեստի գործիչներին, գեղանկարչության, քանդակագործության, գծանկարչության, թատերադեկորացիոն, դեկորատիվ-կիրառական արվեստի գործիչներին և գեղարվեստական արհեստագործության վարպետներին՝ բարձրարժեք գեղարվեստական գործեր ստեղծելու և իրենց գործունեությամբ արվեստի զարգացմանը նպաստելու համար:

Հոդված 10. ԱՐՎԵՍՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾՋԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում է շնորհվում կոմպոզիտորներին, դիրիժորներին, երաժշտական, խմբերգային, պարային և այլ կոլեկտիվների գեղարվեստական ղեկավարներին, ռեժիսորներին և արվեստի մյուս գործիչներին՝ տվյալ բնագավառում ցուցաբերած վարպետության, ստեղծագործող սերնդի դաստիարակության գործում ունեցած մեծ վաստակի, ինչպես նաև արվեստի ասպարեզում արժեքավոր գործեր ստեղծելու համար:

Հոդված 11. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾՋԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Մշակույթի վաստակավոր գործչի պատվավոր կոչում է շնորհվում թատրոնի, կինոյի, կրկեսի արտիստներին, ռեժիսորներին, խմբերգային, երաժշտական, պարային և այլ կազմակերպությունների գեղարվեստական ղեկավարներին, բեմադրիչներին, կոմպոզիտորներին, խմբավարներին, կոնցերտմայստերներին, երաժիշտ-կատարողներին, ճարտարապետներին, լրագրողներին, գրականության և մշակույթի զարգացման բնագավառներում աչքի ընկնող և վաստակ ունեցող գրողներին, կինեմատոգրաֆիայի, հեռուստատեսության և ռադիոյի, մամուլի, հրատարակչությունների, թանգարանների, գրադարանների և մշակույթի այլ աշխատողներին՝ բարձր վարպետության, մշակույթի զարգացման գործում ունեցած մեծ վաստակի և արժեքավոր ստեղծագործությունների համար:

Հոդված 12. ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչում է շնորհվում ճարտարապետության զարգացման գործում բացառիկ վաստակ ունեցող ճարտարապետներին՝ քաղաքաշինության բնագավառում ստեղծարար գործունեության, ճարտարապետական կադրերի պատրաստմանն ակտիվորեն մասնակցելու և համաժողովրդական ճանաչում ստացած ճարտարապետական համալիրների, շենքերի և շինությունների ստեղծման համար:

Հոդված 13. ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԼՐԱԳՐՈՂԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Վաստակավոր լրագրողի պատվավոր կոչում է շնորհվում մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության բնագավառներում աշխատանքային երկարամյա փորձ ունեցող, մասնագիտական բարձր վարպետությամբ աչքի ընկած լրագրողներին,

հրապարակախոսներին, ովքեր իրենց գործունեությամբ ակտիվորեն նպաստել են ոլորտի զարգացմանը, ինչպես նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքի առաջընթացին:

Հոդված 14. ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԲԺՇԿԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Վաստակավոր բժշկի պատվավոր կոչում է շնորհվում առողջապահության բնագավառում առնվազն 15 տարի աշխատած, մասնագիտական բացառիկ կարողություններ, անձնվիրություն, ակնառու վաստակ և հաջողություններ ունեցող բժիշկներին՝ առողջապահության, բնակչության բուժօգնության և բուժսպասարկման բնագավառում ունեցած ձեռքբերումների և ճանաչման համար:

Հոդված 15. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՂԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Տնտեսության վաստակավոր աշխատողի պատվավոր կոչում է շնորհվում արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և կապի, գյուղատնտեսության, բնապահպանության, էներգետիկայի բնագավառներում առնվազն 15 տարի աշխատած, բարձր որակավորում ունեցող աշխատողներին՝ իրենց ակնառու պրակտիկ գործունեության, կադրերի պատրաստման ու դաստիարակության գործում ունեցած մեծ վաստակի համար:

Հոդված 16. ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԻՐԱՎԱՔԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Վաստակավոր իրավաբանի պատվավոր կոչում է շնորհվում այդ բնագավառում առնվազն 15 տարի աշխատած իրավաբաններին՝ իրավագիտության և իրավաբանության զարգացման, օրինականության և իրավակարգի ամրապնդման գործում ունեցած մեծ ավանդի և բացառիկ մասնագիտական կարողությունների դրսևորման համար:

Հոդված 17. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ և ՍՊՈՐՏԻ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԳՈՐԾՉԻ, ՎԱՍՏԱԿԱՎՈՐ մարզչի, ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատողի ՊԱՏՎԱՎՈՐ կոչումները

(վերնագիրը լրաց., փոփ. 10.04.08 ՀՕ-31-Ն)

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի, վաստակավոր մարզչի, ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր աշխատողի պատվավոր կոչումները շնորհվում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի այն աշխատողներին, մարզիկներին, մարզիչներին, ովքեր մեծ հաջողություններ են ունեցել միջազգային մրցույթներում, օլիմպիադաներում, ունեն վաստակ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման գործում, ընդ որում կազմակերպական, մանկավարժական, մեթոդական, բուժական ֆիզկուլտուրայի, գիտահետազոտական աշխատանքներում, և իրենց ակտիվ գործունեությամբ նպաստում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը:

(17-րդ հոդվածը լրաց., փոփ. 10.04.08 ՀՕ-31-Ն)

Հոդված 18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ԿՈՒԵԿՏԻՎԻ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության վաստակավոր կոլեկտիվի պատվավոր կոչում է շնորհվում այն կոլեկտիվներին, որոնք նպաստել են գիտության, կրթության, մշակույթի զարգացմանը, ունեցել են մեծ վաստակ և ցուցաբերել բարձր կատարողական վարպետություն:

Հոդված 19. «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ» ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առանձին պատվավոր կոչումների համար սահմանվում է երկու աստիճան՝ վաստակավոր և ժողովրդական: «Ժողովրդական» պատվավոր կոչում, որպես կանոն, կարող է շնորհվել «վաստակավոր» պատվավոր կոչումը շնորհելուց ոչ պակաս, քան հինգ տարի հետո: Անձին շնորհվում է մեկ պատվավոր կոչում:

Հոդված 20. ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀԱԳԻՐԸ և ԿՐԾՔԱՆՇԱՆԸ

Պատվավոր կոչումների արժանացած անձանց շնորհվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պատվավոր կոչումը հավաստող համապատասխան ձևի շնորհագիր և կրծքանշան:

Հոդված 21. ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՎՈՎՃԱՐԸ

«Ժողովրդական» պատվավոր կոչման համար տրվում է ամենամսյա պատվովճար, որի կարգը և չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 22. ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Պատվավոր կոչումների ներկայացնելն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ հաշվի առնելով նաև լիազորված պետական մարմինների, ստեղծագործական միությունների առաջարկությունները՝ Հայաստանի Հանրապետության Նախագահին ուղղված գրավոր միջնորդագրերի միջոցով:

Անձնական նախաձեռնությամբ պատվավոր կոչումներ կարող է շնորհել Հայաստանի Հանրապետության Նախագահը:

Հոդված 23. ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Պատվավոր կոչումների շնորհումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահը՝ հանդիսավոր արարողության և հրապարակայնության պայմաններում հանձնելով շնորհագիրն ու կրծքանշանը:

Պատվավոր կոչումները շնորհվում են ցմահ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 24. ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Այն անձանց, կոլեկտիվներին, որոնց մինչև սույն օրենքի ընդունումը շնորհվել են պատվավոր կոչումներ, պահպանում են իրենց իրավաբանական ուժը և հավասարեցվում են դրանից հետո շնորհված պատվավոր կոչումներին:

Հողված 25. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹ

Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 2001 թվականի սեպտեմբերի 12-ին ընդունված «Գիտության, կրթության, ժուռնալիստիկայի, մշակույթի, արվեստի, առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառներում Հայաստանի Հանրապետության պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

Հողված 26. ՕՐԵՆՔԻ ՈՒՃԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

**Հայաստանի
Նախագահ**

**Հանրապետության
Ռ. Քոչարյան**

2004 թ.
Երևան
ՀՕ-105-Ն

հուլիսի 10